

Թիւ 24468  
Փետրուար 20, 1975

Արժանաշնորհ  
Տ. Տիրան ԲԿՆԵՄ. Փափագեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Գլխավէնտ, Օհայօ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Փետրուար 8, 1975 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 26ին գումարուած համայնքիդ  
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք  
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Պանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիա-  
կան Խորհուրդի նորընտիր անդամները՝ ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւնը Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸԵՊԻՍԿՈՂՈՍ  
՝ Առաջնորդ

Ֆլօրանս Գարօղլանեան  
Ճէք Խաչէրեան  
Ռուբըրթ Ապտալեան  
Ռոզ Ագարեան  
Ճան Պոռագանեան  
Ջաւէն Բէօշկէրեան